

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վան-Վասպուրական հայրենակցական միության անդամներին, որոնք ամեն տարի Մկրտիչ Խրիմյան Հայրապետի մահվան օրը գալիս են ոգեկոչելու Հայոց Հայրիկի վառ հիշատակը։

Եկող տարի լրանում է Խրիմյան Հայրիկի մահվան 100-ամյակը։ Այս առիթով Վան-Վասպուրական Հայրենակցական Միության նախագահ Ռոմիկ Հովնանյանը հայցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու աջակցությունը, որպեսզի երջանկահիշատակ Հայրապետի մահվան տարելիցը դառնա համազգային հիշատակի օր։

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Հայրենակցական Միության սերն ու նվիրվածությունը Հայ Եկեղեցուն և իրենց մեծ հայրենակցի հիշատակին, նշեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում արժանավորապես կազմակերպվելու են Խրիմյան Հայրիկի հիշատակին նվիրված միջոցառումներ։

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՄ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՓԻԹԵՐ ՍԵՄՆԵԲԻԻՆ

Ապրիլի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբիին՝ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան տիկ. Հայքի Փայչի ուղեկցությամբ։

Ողջունելով Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչին Մայր Աթոռում՝ Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերեց նրան նոր հանձնառության առիթով՝ մաղթելով, որ իր առաքելությունը պսակվի լիակատար հաջողություններով։ *«Մենք լիահույս ենք, որ Ձեր աշխատանքի շնորհիվ պիտի կարողանանք խաղաղությունը կայուն դարձնել այս տարածաշրջանում և այս տարա-*